ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«25» «Մարտի» 2021 թ. № 99-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 332-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 33-րդ հոդվածը, Կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի N1667-Ն որոշման 3-րդ հավելվածի 3.1 կետի 1-ին ենթակետը և Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N745-Լ որոշման 18-րդ կետի 20-րդ ենթակետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 9-ի «Սևանա լճում արդյունագործական որսի նպատակով օգտագործվող լողամիջոցների մուտքի և ելքի տեղամասերը հաստատելու մասին» N 332-Լ հրամանի (այսուհետ՝ հրաման)՝

1) վերնագրում «տեղամասերը» բառից հետո լրացնել «և որսի իրականացման ժամային գրաֆիկը» բառերով,
2) 1-ին կետում «հավելվածի» բառը փոխարինել «հավելված N1-ի» բառով,
3) Հավելվածի վերևի աջ անկյունում «Հավելված» բառը փոխարինել «Հավելված N1» բառերով:

2. Հրամանը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ կետով.

«2. Հաստատել Սևանա լճում արդյունագործական որսի իրականացման ժամային գրաֆիկը՝ համաձայն հավելված N2-ի:»:

3. Հրամանը լրացնել N2 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

ՆԱԽԱՐԱՐ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

3/25/2021

X

ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN ROMANOS 3608790012

«25» Մարտի 2021 թ.

ք. Երևան

Հավելված
Շրջակա միջավայրի նախարարի
2021 թվականի « մարտի » «25» -ի
N 99 - Լ հրամանի

«Հավելված N2
Շրջակա միջավայրի նախարարի
2020 թվականի «սեպտեմբերի» «09» -ի
N 332 - Լ հրամանի

Սևանա լճում արդյունագործական որսի իրականացման ժամային գրաֆիկը

h/h	ԱՄԻՍԸ	ՍԵՎԱՆԱ ԼԻՃ ԼՈՂԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՒՏՔԻ ԵՎ ԵԼՔԻ ԺԱՄԵՐԸ	
		ՄՈՒՏՔԻ ԺԱՄԸ՝ ՍԿՍԱԾ	ԵԼՔԻ ԺԱՄԸ՝ ՄԻՆՉԵՎ
1.	Մարտ	6:30	18:00
2.	Ապրիլ	6:00	19:00
3.	Մայիս	6:00	19:00
4.	Հունիս	5:00	19:00
5.	Հուլիս	4:00	19:00
6.	Օգոստոս	4:00	19:00

»: